



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«15» ապրիլ 2021թ.

N 18-Ճ

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ԵՎ
ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ, ԴԱԴԱՐԵՑՄԱՆ
ԵՎ ՄԵՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասով, 26-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և 7-րդ մասով, ինչպես նաև «Պետական տուրքի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 16-րդ և 34-րդ հոդվածի 3-րդ մասերով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորող հանձնաժողովի 2021 թվականի ապրիլի 8-ի N 7 որոշումը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Տրամադրել Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակներով զբաղվելու համար՝ 9 իրավաբանական անձանց շինարարության իրականացման լիցենզիա և թվով 9 ներդիր, 3 իրավաբանական անձանց շինարարության որակի տեխնիկական հսկողության լիցենզիա և թվով 3 ներդիր (համաձայն հավելված 1-ի):

2. Տրամադրել Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակներով զբաղվելու համար՝ 1 իրավաբանական անձի շինարարության որակի տեխնիկական հսկողության թվով 1 ներդիր, 1 իրավաբանական անձի քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման թվով 1 ներդիր (համաձայն հավելված 2-ի):

3. Փոփոխել Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակներով զբաղվելու համար՝ 1 իրավաբանական անձի շինարարության իրականացման թվով 1 ներդիր, 1 իրավաբանական անձի շինարարության որակի տեխնիկական հսկողության թվով 1 ներդիր, 1 իրավաբանական անձի քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման թվով 4 ներդիր (համաձայն հավելված 3-ի):

4. Դադարեցնել ուժը կորցրած ճանաչելու միջոցով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորված 1 իրավաբանական անձի շինարարության որակի տեխնիկական հսկողության թվով 1 ներդիր, 6 իրավաբանական անձանց շինարարության իրականացման թվով 5 լիցենզիայի և 8 ներդիր գործողությունը (համաձայն հավելված 4-ի):

5. Մերժել 16 իրավաբանական անձանց շինարարության իրականացման, 5 իրավաբանական անձանց շինարարության որակի տեխնիկական հսկողության համար ներկայացված լիցենզիայի և ներդիր տրամադրման հայտերը (համաձայն հավելված 5-ի):

6. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝

- «Պետական տուրքի մասին» օրենքի համաձայն լիցենզիան հանձնել լիցենզավորված անձանց՝ համապատասխան տարեկան պետական տուրքի վճարման դեպքում:

- Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի, սույն հրամանի պատճենը երեք օրվա ընթացքում պաշտոնական հրապարակման համար ուղարկել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

 Recoverable Signature

X 

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ